

Հ Ա Ս Տ Է  
Rédaction du Journal arménien  
ARCHALOUYCE  
(EGYPTE) LE CAIRE

# ԱՐՁԱՆՅՄ

ՊԱՅՏԱԿ

ՆԻՊՇՈՍ  
Տարեկան դրոշմը 30  
ԱՐՏԱՍՏՄԱՆ  
Տարեկան գրանց 10

Ռաժարողը ՅԱԽԵԼՈՒՍԻ ԱՆՆԱ փոխարեւմտական գրքի պիտի ըլլան:

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԲԵՐԹ

Թե՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ Արշակունի խնդրոց համար պիտի հրատարակուի իւրաքանչեւ հարցոցով թերթիս Մասկարարին, որ է՝

Ձի հրատարակուած ձեռագիրները եւ չե՛ն սրուիր:

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր համաձայնութեամբ:

Քառս - Ներ - Խարտարարի  
ԵՂԻՏԷ ԳՈՐԾՆԱՆ

ՓԵՏՐՈՒ ՓՈՓՈՔԻՆԵՆ

ԿԸ ՇՐՄԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագրները ուղարկելու պատահաւորապէս եւ իրենց գրածներու

ZUSC 20 ՓԱՄԱ ՈՂԱ

### ՇՆՈՐՀԱԿԱԿԻԻ

Ժամանակն է որ շնորհակալութիւն յայտնենք մեր այն յարգելի բաժանորդներուն, որոնք ինքնաբերաբար փութացին վճարել իրենց բաժնեգրին «Արշակունի» ի հրատարակման նիւթական դժուարութիւնները թիթեղներու ազնիւ դիտարկութեամբ:

Շնորհակալութիւն նաեւ ամեն անոնց ալ՝ որոնք «Արշակունի» Պ. Մատակարարին պէտք ունեցած առանց ըրած դիմումին, մէկ անգամով իրենց տարեկանը հատուցանելով պատասխանեցին ազնուաբար Առանց է յիշեցնել մեր շատ մը բաժանորդներուն, որոնք տակաւին փոյթ ունեցած չեն իրենց տարեկանը ընելու, որպէսզի բարեհաճին առանց մեր դիմումին սպասելու ինքնաբերաբար կատարել իրենց պարտքը: Այդպիսիներն ալ վճարվան պարագային մեր անկեղծ շնորհակալութիւնն չ'զրկելու համար, այսօրու իսկ կը յայտնենք մեր կԱՆԻՍՏԱՆՈՒԷՐ՝ շնորհակալիքը:

Առիթը չենք փայտցնել մեր հրատարակիչ դժգոհութիւնը յայտնել կարգ մը մարդոց, որոնք ո՛չ միայն թերթը ձրի կարդալու ամեն ջանք չ'խնայեցին մինչև ցարդ, այլև առիթներ ալ փնտռեցին իրենց հասկացողութիւնն վեր դանդաղան անտեղի դիտողութիւններ ընել:

Ասոնց պատասխան մը տուած ըլլալու համար, մեր կողմէ վիրաւորելի բան մը ըսել չենք ուզեր ու խօսքը «Մանգուսէի» հանգուցեալ Հիմնադիր - Խմբագիր Կ. Փանոսեանի կուտանք: Սա՛ տեսնելով որ իր թերթը ամենէն աւելի կը փնտռուի ու ամենէն ալ շատ ձրիավորները կը կարդան, թերթին ճակատը 120 բունդօ տառերով հետեւեալ բառերը գրեց: «Ձրի թերթ կարգաւ ը գողութիւն է...»

ԽՄԲ.

### ՅԱՆՈՒՆ ԱՐԳԱՐՈՒԹԵԱՆ

Անիրաւութիւն մը, ենթարկուողին համար այնքան աւելի ըզգալի և դիտողի համար այնքան աւելի նողկալի է, ո՛րքան անիրաւուածը ամեն տեսակետով անկարող է և հարստահարողը՝ կարող: Ի նրկատի առնելով մարդկային անյագ շահախնդրութեան ոգին, վէճի նիւթ

առարկային տեսակն ու արժէքը աւելի կամ նուազ սուր կերպարան մը կուտան այդ հանգամանքներուն: Հարուստի մը և աղքատի մը կրօնը վերջնոյն պատկանած հազար ֆրանքի գումարը մը համար, արդէն եպիտոբի կուտ մ'է: Բայց այդ կուտը սուղամեքով պէտք է վերջանայ, երբ կուտարարներն մին բարեկեցիկ է և միւսը մուրացիկ, և վէճը՝ ներկարարի տուփի մը շուրջ կը դառնայ: Տարրական ճամբարութիւններ են ասոնք, բայց երբ գրեթէ ամենօրեայ դէպքեր կուտան գրականապէս փաստել թէ չ'ընեն իսկ այդ տարրական ճամբարութիւններ կ'ընդունուին ճիշտ այն անձանց, կամ մարմիններու, կամ իշխանութեանց կողմէն, որոնց ստանձնած պաշտօններն են՝ իրաւարարութիւն, արդարադատութիւն և տկարին պաշտպանութիւն, և երբ միւս կողմէն կը տեսնենք թէ հանրային կարծիքը, այսինքն ժողովուրդը՝ անտարբեր աչքերով կը նայի այս տեսակ գեղձուսներուն վրայ, մարդ կը խորհի որ այդ տարրական ճամբարութիւնները, չեն թերևս այնքան տարրական՝ որքան կը կարծուին ըլլալ: Ուստի դիտողի վրայ պարտականութիւն մը կը ծանրանայ (կրակ կայ) պառաւու, հանրային ուշագրութիւնը դէպի այն կողմը հրաւիրելու համար. և այս առի զգուշութիւն ամենուն. վաստիցի գաղափարով, գրեթէ երկշտուութեամբ սկսուած անիրաւութիւն մը, կ'իջի իր խանձարուրին մէջ չը խղճուի, կը քաջալեզուի, կը մեծնայ և նսխ մութին մէջ ու տկարագունին վրայ ըրած աւերակները քիչ լետոյ լոյս ցերեկով և տեղի հզօրին վրայ կ'ընէ: Այսօր ինձի, վաղը քեզի: Ամենէն ահաւելի բունապետութիւնները ուրիշ կերպ չ'են սկսիր: Այս անհրաժեշտ մի քանի տղերքէն ետքը, բուն խնդրոյն գանք:

«Արշակունի» ի վերերևուածն ի վեր Տ. Ն. Թորոսեանի կողմէն հրատարակուած մի քանի գրութիւններէն թերևս այնպէս կը մակարբերուի թէ Առաջնորդարանի կողմէն հաղուադէպ զրկանքի մը զօ՞ գացած է յիշեալ Պարոնը՝ զրկանք՝ որ

Թախառական Հրեայի Օրիորդ տը Գարտովիլը կը յիշեցնէ: Ես, հակառակ իմ ճիգերուս, բաւական հաստատ յենարան մը չ'գտայ ճշմարտանման վէպէ մ'աւելի բան մը գտնելու համար այդ գրութեանց մէջ: Թերևս անյ պատճառաւ որ խօսողը միշտ մի և նոյն անձն է: Բայց ուրիշ գիտս մ'ըրի. այն է թէ՛ Առաջնորդարանը, որ «մեզ պաշտպանող միակ իշխանութիւնը» յորջորջուեցաւ վերջերս սարքուած միթիւնի մը մէջ, և որուն գերագոյն հեղինակութեան կը պարտինք: Վերջին Հատուած մը որ թերևս եզրապատահայ գաղութին գլխուն իջուցուած վերջին հարուածը եղաւ կամ պիտի ըլլայ, Առաջնորդարանը՝ որ իր հօտին ճամբարի պաշտպանը՝ պէտք է ըլլայ զործով և ո՛չ բանիւ, Առաջնորդարանը կամ անգիտակ է իր այդ բարձր պաշտօնին, և կամ մէկէ աւելի կանոններ ու խիղճեր ունի իր տրամադրութեան տակ: Ահա եղելութիւնը:

Եւրջ երկու տարի առաջ (առայտմ թուականները չ'ենք ճշգրտ) Տ. Ն. Թորոսեան, իբր ուղեղային հիւանդութեամբ մը բռնուած, հիւանդանոց կը խրկուի Առաջնորդարանի միջոցաւ: Մարդը իրաւ հիւանդ էր թէ ո՛չ: Պարզ խօսինք. Տ. Ն. իր խելագարած էր: Ինք կ'ըսէ. Ո՛չ: Առաջնորդարանը կ'ըսէ Այո՛: Մենք Ազգային իշխանութեան կողմը բռնեցք, ըստ որում մեծամասնութիւնը հոն է, և ըսենք. Այո՛. Տ. Ն. իր խելագարած էր պատճառաւ մը՝ որ մեզի յայտնի չէ տակաւին: (°) Իրաց այս վիճակին մէջ, Առաջնորդարանը խնամակալի մը պաշտօնը ստանձնած է թելադրանքով կամ ինքնաբերաբար: Բայց խնամակալի այդ պաշտօնը հիւանդը՝ հիւանդանոց խրկելուն մէջ կը կայանայ միայն: Հիւանդը կին մ'ունի, ժառանգորդներ ունի, գոյքեր ունի, առնելիք տակաւիք ունի: ո՞վ պիտի հսկէ անոնց վրայ: Այս հարցումներուն պատասխանը նոյն ինքն էր: Առաջնորդ չ'այլը կուտայ իր հետեւեալ գրու-

Ծ. Խ. (°) Պատճառներուն զըխառններէն քանի մը մասերը բացատրուած են արդէն:

Թեամբ, ուղղեալ առ Տիկին Ն. Թորոսեան:

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ԵԳԻՊՏՈՍԻ  
ԹԻՒ 2538

Գահիրէ 2)15 փետ. 907  
Ազնիւ  
Տիկին Մաքրուհի Ն. Թորոսեան  
ի Գաղաքիս

Ազնիւ Տիկին  
Ինչպէս դիտէք Ձեր ամուսնոյն Պ. Նիղիէ Թորոսեանի գոյքերէն մաս մը սակէ առաջ հակզ եղած էր դատարանի կողմանէ եւ վաճառուած, ըստ խնդրանաց Եանրօգեան եղբայրներու:

Այս անգամ գատարանէն ազգարարուած է Առաջնորդարանիս թէ գոյքերուն մէկ մասն ալ հակզ եղած է եւ դատարանի պատուիրակին ձեռքով պիտի վաճառուի տեղւոյն վրայ՝ տարուս Մարտ 5 ին: Երեքշաբթի, առաւօտեան ժամը 11 ին:

Ձայս ազգարարելով Ձեզ՝ կ'աւելցընենք թէ Ազգային դիւանատան հրահանգ տրուած է մեր կողմանէ՝ վերոյիշեալ հակզին թուղթերը եւ պատրաստ ամբողջ զինել Ձեր տրամադրութեան տակ որուն պարունակութեան կրնաք տեղեկանալ, առանց տեղափոխելու զայն:

Ողբուհի եւ օրհնութեամբ  
միամ աղօթարար  
Առաջնորդ Եղիպտոսի Հայոց  
Մկրտիչ Մ. Վարդ. Աղաւունի  
Ա. ՊԱԼԵՍԷ

Ետունակելի

### ՉԵԿՈՑԾ

Մեր նախորդ թուով ըրած խօստուածին համաձայն, մեր կողմէ առանց նկատողութիւններ աւելցնելու, կը հրատարակենք թուականի կարգաւ այն բժշկական վկայականները՝ որ Ազգ. Առաջնորդարանի կողմէ կարգեալ բժիշկներու կողմէն տրուած են Տ. Ն. Թորոսեանի, և այն նամակը՝ որ ուղղուած է յիշեալին կողմէ Պատկ. Երեսփոխան ժողովոյ: Ասոնց թարգմանութիւնները տեղւոյ անձկութեան պատճառաւ զանց կ'ընենք:

ԽՄԲ.

Dr. KLUDJIAN (N.S.)

Cairo 20) 9) 1907

This is to certify that the applicant, called Mr. Yeghishé Torossian, an Armenian, about 40, or more, has no mental trouble and does not present a-

ny Psychic taches. He looks rather depressed nervously on account of some circumstances against him. I would rather retain morally and judicially responsible all those who try to bring him in a desperate position causing henceforward some mental trouble which he has none for the present. In good faith and personal knowledge I sign.

N. S. KLUDJIAN

Dr. PISTIS

Le Caire le 28, 9, 907

Je soussigné, Docteur en médecine demeurant au Caire. certifie que ayant eu l'occasion dans ces dernières semaines d'examiner chez moi Mr. Eghiché Torossian agé de 41 ans, plus d'une fois, je n'ai jamais observé chez lui aucun signe caractéristique de dérangement mental;

Dr. PISTIS

Dr. MAHOKIAN

3-5 p. m.

Le Caire le 7 Oct. 907

Je certifie avoir examiné Mr. E. Torossian et n'avoir constaté aucune maladie mentale.

MAHOKIAN

Պատկանելի երեսփոխանական ժողովոյ զիկուսած բողոքագիրք .

Le Caire Le 21 Décembre 1907

Son Excellence Boghos Pacha Noubar Président de l'Assemblée Générale de la Communauté Arménienne Le Caire Excellence,

Je prends la respectueuse liberté de rappeler à Votre Excellence, mes lettres, en date de 28 Janvier, 28 Février, 8 Mars, et 25 Avril 1907 toutes recommandées, dans lesquelles je priais de Votre Excellence, de rendre justice à mes affaires, après une enquête sérieuse.

Il y a six mois que je suis sortie de l'Hôpital, où j'étais enfermée si injustement, et jusqu'à présent tous mes efforts auprès du Patriarcat sont restés sans résultat, J'ajoute ici que le sieur Adom Aslanian et le Dr. N. B. Ketchédjian membres de l'assemblée Générale ont joués un rôle tout à fait abominable dans mon affaire, c'est pourquoi j'ose d'attirer Votre attention sur ce point pour accepter leurs opinions sous bénéfice d'inventaire.

Quelque uns des membres du conseil d'administratif même, par des condition inacceptables, qu'ils me proposent de signer, me taxe d'être intrensigeant, Je suis sur et certaine qu'ils tacheront d'empêcher Votre Excellence, de donner libre cours à Votre justice envers moi.

C'est justement cette ligne de conduite du Patriarcat, qui est la cause que je reste sans travail depuis six mois, privé de tous moyens pour gagner paine je me suis trouvé dans le nécessité de m'adresser à l'aide d'autrui

eres et en même temps je portais sur mon dos, la calomnie du monde ignoré .

Je vous prie Excellence, de vouloir bien nommer de Votre part des personnes consciencieuses pour faire une enquête sur ma dite affaire, afin qu'ils vous présentent leurs rapport, pour lui donner tel suite qu'il comporte .

Je reste, Excellence, Votre très-humble et très-obéissant serviteur .

Ex-Direct. Propr. du Journal arménien « ARCHALOUYCE » E, Torossian

Թ Ե Ր Է Ք Ե Ն Ե Ր

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆ ՅՍՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱԶԿԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

Գահիրէ 11)24 Ապրիլ 1908 Թիւ 526

Առաջնորդարանս Ազգ. Գաւ. Վարչութեան Պատ. Բաղաքական ժողովոյ որոշման համաձայն՝ կը յայտարարէ թէ անոնք, որ պահանջ ունին ի Բաղաքիս հանգուցեալ կեսարացի ծխալաճառ Բարսեղ Նազգաչճեանէ, պէտք է ներկայանան Առաջնորդարանս, Տիգրանակերտցի կոչկալաճառ հանգ. Յովսէփ Պետրոսեանէ պահանջ ունեցողները պէտք է դիմեն այրիին՝ Տիգրան Թումանյան Պետրոսեանի, անոր խանութը ի Մուսկի, իսկ Կ. Պօլսեցի հանգ. ոսկերիչ Խոսրով Մըկրտիչեանէ պահանջ ունեցողները հարկ է որ դիմեն հանգուցելոյն միակ ժառանգորդին ներկայացուցչին Տիգրան Եղիա Կիւմուչճեանի, որ անցողաբար ի Գահիրէ կը գտնուի այժմ և որու գործատեղին է ի Կ. Պօլս մեծ շուկան .

Այս երեք թէրէքէներու համար դիմումները պէտք է ըլլան գրաւորապէս և ընկերակցեալ վաւերական թուղթերու և թուականէս 31 օրուան մէջ, եթէ պահանջատէրն եզրկատու կը գտնուի, և 61 օրուան մէջ՝ եթէ եզրկատուէն դուրս է . Անհետեանք՝ պիտի մնան այն դիմումները որ այս պայմանաժամէն ետքը տեղի կ'ունենան . 2—3

Առաջնորդ եզրկատուի Հայոց ՄԿՐՏԻՉ Ե. ՎՐԴ. ԱՂԱԻՆՈՒՆԻ

ԻՆՏԵՐՆԱԿԱՆ

Յետագայ գրութիւնը Տ. Ե. Թորոսեան կառավարական Հիւանդանոցի մէջ գրելով, իրեն այցելուներէն մէկուն միջոցաւ կը զրկէ Վուսաբերի Վարչութեան անգամներէն Պ. Վահան Բիւրքճեանին և մասնաւոր նամակաւ մ'ալ կը խնդրէ Պ. Արփիարէն և միևնոյն ատեն « Լուսաբերի » Վարչութեանէն, որ բարեհաճին անկիւն մը շնորհել այդ գրութեան համար Սակայն լոյս չը տեսներ այն . Պատճառ . Որովհետեւ հիւանդանոցէն գրուած է եղեր . . . Թէպէտեւ գրուածն ալ խիստ յաղոյած է եղեր, իրենց յայտարարածին նայելով .

Ահա գործանալի Վարչութիւն մը՝ որ անարգարօքէն վար գրուած մարդու մը գոնուած տեղին անունէն գտնել ուղելով, գիտակցաբար մեղաւորեց կը հանգիստնայ ոճրագործութեան մը՝ որոյ մասին արգէն քիչ շատ խօսուեցաւ .

Տիգր Թորոսեան գանգատելու համար « Լուսաբերի » ալ ևս հաստատուած մեղաակցութեան և կողմնակալութեան գէտ, միևնոյն օրերը այդ գրութեան օրինակներ կը զրկէ իրեն կատարեալ վստահութիւնը վայելող անձերու .

Ոճրին հետքերը տեսնելի կըլլան . ենթական կազատի իր բանտէն և Պ. Վ. Բիւրքճեանի գիտելով բընագրէն գոնէ ընդօրինակել կուզէ, ձեռագրին ետ արուելը անկարելի ըլլալը ընդունելով . Բաղաքալարի պատասխան մը կ'առնէ մերժումով .

Եւ արգէն ուրիշ կերպ չէր ըստպատէր, անոնց բոլոր ներքին միտքերուն վաղուց ծանօթ ըլլալով . . .

Վերջապէս վստահելի անձէ մը ձեռք կը բերէ իր զրկած օրինակներէն մին՝ որ հետեւեալն է, և որուն թուականին ուշադրութիւն ընել կը խնդրուի, որ է 21 Սեպտ. 1906 . Առաջնորդարանի հետ սկսած բանակցութեան անելի առաջ .

Այս գրութեան հրատարակումին բուն պատճառներէն մին անուղակի պատասխան մը տալն է Պ. Ս. Օ. ի անցեալ թուով գրած « Բնաջնջումի նշաններ » յօդուածին .

Լ Ո Ւ Ր Ե Ր Ո Ւ Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ը

Ամէն զգայուն մարդ՝ ակամայ կը փորձուի պահ մը խոկալ թէ՛ բարոյականը՝ երբեմն հայ լրագրութեան պարզ լուրերուն մէջէն ալ գլուխը առած քալելու վրայ է . . . անշուշտ յեղափոխական գաղտնիքի մը մոգական ազդեցութեան տակ .

Այսպէս մտածելու շարժառիթ կը հայթայթէ մեզի « Ազատ Բեմ » ի Գ. տարի 5 Սեպտեմբեր 39 րդ թրուոյն մէջ թարգմանաբար արտագրուած լուր մը, խմբագրութեան կողմէ անցուած « ՌՈՒՍ ԿՆՈՂ ԴԵՐ ԸՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՄԷՉ » շուրջալից վերտառութեամբ, որ հետեւեալն է .

« Եւրոպական թերթերու Բեթերագրակի թղթակիցները՝ Գրոնշթատի զինուորական ապստամբութեան վրայ խօսելու առթիւ՝ կը հաւաստեն թէ՛ բաւական ժամանակէ ի վեր, պատուաւոր ընտանեաց դաւակ ուս աղջիկներ յատկապէս հանրատուն կը մտնեն և հոն ինքզինքնին կը յանձնեն զինուորներուն զանոնք դէպ ի ընդվզում և ապստամբութիւն մղելու նպատակով . Այս հերոսութիւնը մեծ մասամբ բանտարկուած են, բայց իրենց բանտին խորէն ալ չեն գագրիւ խրախուսելի բոլոր անոնք՝ որ յեղափոխութեան յաղթանակին համար կը կուռին . »

Այդ միևնոյն լուրը՝ ճշգրտապատու ըլլալու պայմանաւ՝ « Ազատ միկ » թերթին ալ կը հրատարակէ՝ իր Ա. տարի 23 Օգոստոս թիւ 85 ի ար-

տաքին լրոց բաժնին մէջ, հետեւեալ պարզութեամբ .

« Ատենէ մը ի վեր Ռուսական բանտերուն մէջ սկսած է ամուսնաբխներ տեղի ունենալ բանտարկեալ օրիորդներու և էրիկ մարդոյ միջև . Իրէվն բանտին մէջ, քանի մը պսակ մէկէն կատարուած են . Պատկազրութիւնը՝ շղթաներու շաւաչիւնի տակ խիստ յուզիչ տպաւորութիւն մը առաջացուցեր է . »

Այս երկու պարզ լուրերը հարեանցի բաղաատուութեան մը բովէն անցնելէ յետոյ, որ և է ընթերցող, պարտաւորութիւն կը համարի հաստատել թէ՛ մին՝ « Ռազմիկ » ին հաղորդածը՝ համեստութիւն, պարկեշտութիւն և ճշմարտութիւն միանգամայն կը բուրէ, իսկ միւսը՝ « Ազատ Բեմ » ին հաղորդածը՝ որ « Յեղափոխութեան » զօրաւոր Ռեզլամ մը ընելու թափով խնդրուած ու խնդարեալութեամբ է, լրբութիւն և անբարոյականութիւն կը հոսի, մերկապարանոց վիճակի մէջ .

Արդարև պէտք է ընդունիլ թէ՛ իրական սեռը իր որոշ դերը ստանձնելով յեղափոխական ձեռնարկներու մէջ, անփոխարինելի օգուտներ կըրնայ ընծայել . սակայն այդ դերը պէտք է հաստատուած ըլլայ աղնուութեան, գիտակցութեան, պարկեշտութեան և մանաւանդ ազնուօրէն ներշնչուած անձնութեան կուռանին վրայ, այն ալ ներքին սահմաններու մէջ, ո՛չ թէ հանրատան զղուելի միջնորդութեան բղխած, որուն ինչպէս յայտարարուած էն կարելի է հետեւցնել, դժբաղաբար հաւատացողներ կը գտնուին եղեր . .

Սա տարակոյս չ'վերցնէր սր լըրագրաց միջոցաւ տրուած լուրերը, շատ անգամ անուղակի թերագրանք և հրաւէր կը նշանակեն անորոյ հասցէներու ուղղուած . Արդեօք « Ազատ Բեմ » իր ինչպէս ըսինք՝ շունդալից վերնատիտղոսով, որուն մէջ յեղափոխական շեշտ մը կայ « Յեղափոխութիւն » բառին շուրջուած, իր համայնքին այրիկներէն ալ մըտովի՝ յիմարաբար պիտի ըսէին՝ նըմանօրինակ հերոսութիւն . . . » Եւ պատելու չափ առաջ կըրթայ, որպէս զի այդ միևնոյն պայմաններու մէջ հայ յեղափոխութեան օգտակար ըլլալու ջանքեր ընեն, հայուն յեղափոխութիւնը միամտաբար չիտթելով . . . իսկապէս ճշմարիտ և գործօն յեղափոխութեան հետ .

Եթէ ըսենք որ՝ « Ազատ-Բեմ » ի թարգմանիչները հասկնալու վիճակին մէջ չեն գտնուիր փրանսերէն պարզ գրուած մը, ինչպէս կարելի է հետեւցնել երկու թերթերուն մէջ հրատարակուածներէն, և ամուսնաբխներ չիտթել ուզած են հանրատան լրբուկ կեանքի հետ, մեր կողմէ գիտակցաբար գործուած սրխալ մը պիտի ըլլայ այս . իսկ եթէ Յեղափոխութեան իմաստէն արտատվոր եղանակաւ գինոլցած՝ իրողութիւնները խնդարեալութիւնը կը ներկայացնեն ընթերցողներուն՝ այս անգամ բացարձակապէս աններելի կը գտնենք զայն, որովհետեւ կրնայ պատահել որ այդ թերթի ընթերցողներուն ամէնն ալ զօրաւոր բա-



ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻՄԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿՂ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕԶՊԷԲԻԹԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

ՍԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնին .

Պարսկական ամենաընտիր թէմպէքիէ այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալել է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու ածանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէն ընտրով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐՔ

Լեցուած՝ Եւրոպայի՝ Հայոց Գլխաւոր Գործակալներու պատասխանին կ'սպասեն արշաւելու դէպ Սասուն, Վան, Կարկառ .

Ատիկայ քիչ մը խելքի մտէ . թերեւս այդ կերպ որոշում մը տրուած ըլլայ մեր Ազգի Մեծերու մօտ . բայց բան մը հարցնեմ, Անգրանիկ փաշան այդ խումբերու գլուխն է թէ ոչ . Սըրմբապետին եթէ այն ըլլայ՝ լաւ է, ապա թէ ոչ . ամէն մէկը իր գլխու գործ պիտի տեսնէ .

Ըսածս ինչ է արդէն, Անգրանիկ փաշան պիտի թերէ հրամանը, ինքը Հիմա Փարիզ կը գտնուի, եթէ տեսնէ որ Եւրոպայէն մեզի յոյս մը չ'ըկայ՝ պիտի գայ՝ եւ ինչպէս ըսի՝ վերջը չ'ատ, չ'ատ գէշ պիտի ընէ .

Թո՛ղ գա՛յ, անիկայ որ չը գայ մեր բանը քոջե, չուն - չան որդի Քիւրտերը Անգրանիկ փաշան կորսնցուցին, անոր համար կատեցան, քանի փաշան հոս էր՝ Քիւրտերը ծակէ ծակ կը փախչէին .

Հապայ եթէ այս անգամ ես կա՛ւ . . . .

Ես ճիշդը խօսիմ, եթէ այդտարի մեր ազգի տառապանքներուն վերջ մը չը գրուի՝ մարդ չը մնար մեր քաղաքը, ամբողջն ալ պիտի գաղթեն, ես մեր յեղափոխականներուն սա չ'ափ միայն կը մեղադրեմ - որ, մինչև այսօր այնչափ գործեր տեսան՝ չը կարողացան մասամբ մ'ալ գաղթելու ազգակործան նպատակ ունեցողները սաստել .

Այդ իրաւունք ունիս, բայց գիտելու պարագայ մ'ալ կայ որ, գաղթելն ալ ունի իր մասնակի միտքերէ կողմերը, այն որ՝ տակաւին ունի իր ձեռքը թեթեւ գրամագլուխ մը, եւ միւս կողմէ ալ կը տեսնէ որ նեղութիւն ու տառապանքը ամէն ոք օրօրաւ թափով կուգան չըլտապատելու գինքը, ուստի պարտաւորեալ այդ փոքր գումարը, հակառակ իր կամքին՝ փոխանակ շահագործելով ապրելու՝ պիտի ծախսէր անմիջապէս, կը յատկացնէ իր ճամբու ծախքին կը հետանայ, եթէ ձեռնունայն շարունակէր մնալ հոս՝ պիտի պարտաւորէր մուրալ՝ եթէ երբէք անգին գրտնուէր մէկը՝ որ ձեռնհաս լինէր պատառ մը չորարեկ հաց իրեն կարկանդակ .

բայց օտարութեան մէջ այդպէս չէ . եթէ մուրալու իսկ լինէր առանց ամբողջնալու ձեռքը պիտի երկնցնէր ատոր անոր, ինչ որ հոս ընելու պիտի ամենար իր բարեկամաց ու ազգականաց ներկայութեան, որոնք երբեմն իր սեղանի շուրջը բոլորուած՝ մասնիկայի բոգգաներ կ'ընէին օրերով .

Իհն չը փախչինք տակաւին . Սուլթան Համիտը իր արիւնտուշտ քրմահանոցիցը գոհացում տալու համար՝ տեսակ մը արիւն շողախ քաղաքականութեամբ մեր դարաւոր հարստութիւնը, որ տեսակ մը պատմական հանգա-

մանք ստացած էր Ազգերու մօտ, քաշելով գրաւելով ի փառս իր Սուլթանունէններուն՝ երկրէ երկիր մուրացկանութեամբ թափառելու աստիճան դիպ աղքատացուց, հայրենեաց կոյս - անարատ հողը մեր եղբայրներու արիւնովը ներկեց ու շողեց . մեր երեխաները Սուլթանի ծայր հանել տուաւ, օրօրացում կ'ուպկայած . մուշ, մուշ, քնացող անլեզու միամտեայ նորածինները լեռնե-րու գոգաթիէն օրօրացով ողջ ողջ վար գլորել տալով՝ ջուրի հոսանքին յանձնեց, առիթ ընծայեց որ բարբարոս Քիւրտը եւ անկիրթ գինեորը մեր ընտանեաց ու զաւակաց անարատ պարտաւորեց իրենց անհոգի ատեն ալ խանչէրը գլուխուն ընծայ սպտանալից յոշոտումներով պարտաւորեցին որ հաւատափոխ ըլլան, մուսախիւրմուս գրաւել տուաւ մեր հողային եւն . անչարժ կալուածները, չարագործներուն եւ զեղծ պաշտօնէից հարկ եղած պարտիւնն տնօրինել տալու համար, ըստ օրինի իրեն զիմում եղած պարագային՝ պատուանշաններով քաջալերեց նշանակեալները . եւ զեռ ասոնցմով չը բաւականանալով, վերջին իրատէով մը զինուորագրութեան ազատ կացուց այն ամէն չափահաս միւսլիմները, որոնք պատիւ ունենային Հայ օրերը մը հաւատափոխ ընել յաջողի եւ նորա հետ ամուսնանալ . Պետիկ, մենք չե՛նք ըմբռնել միթէ որ, հայրենեաց հողէն դուրս ոչ կեանք կայ մեզի եւ ոչ երջանկութիւն, միայն թէ՛ զեռ յուսահատելու չենք, զեռ կը կրենք պուտ մը արիւն, զայն ալ թափենք, տեսնենք Աստուած ինչ կուտայ . - Ես որ գրեց մեր իրաւոցե, Աստուած ալ պիտի գորի իր իրաւեկն .

Կը յիշես, Պետիկ եղբայր, երբ տակաւին Սուլթան Համիտը ոչ - բարով չէր եկած այս աշխարհ, երկիրը ո՛ր աստիճան խաղաղ էր, Հայերս ի՛նչ աստիճան հարուստ ու հանգիստ էինք, այն ատենները, եթէ երբէք տասը տարին անգամ մը, աննշան գողութիւն մը կամ շատ շատ մարդասպանութիւն մը տեղի ունենար, 10-20 տարի, իբրեւ զարմանալի բան, խօսակցութեան նիւթ պիտի ընէինք այդ կարգի պատահարներ, որովհետեւ օրինակները պակաս էին եւ մենք վարժուած չըլլալով ո՛ր եւ է կորուստ տալու՝ շատ զարմանալի կը թուէր մեզ, բայց Համիտեան շրջանէն ասդին, յորում կարծես զրական օրէնք եղաւ ամէն օր բազմազան կորուստներու հանդէպ գտնուել, այլիւս շատ չենք զարմանար, եւ ոչ ալ պէտք եղածին պէս կ'զգածուինք, նոյն իսկ շատ անգամ ալ մենք մեր ձեռքով պիտի ուզէինք վերջ տալ մեր կեանքին՝ տեղի ունենալիք աննպատակ կամ սպառնալից տագնապի մը լուրը առած ատեններս . իմ կարծիքս, կը փափաքէի

որ, Պետիկ, փոխանակ առանց ո՛ր եւ է մասնակցութիւն մ'ունեցած ըլլալու յեղափոխական գործառնութեանց մէջ՝ ամէն օր, թիւրմարցութեանց տեղի տրուող պարագայից տակ անմեղ գոհեր ըլլալու՝ լաւ կը լինէր որ, ամէնքս ալ յեղափոխական պատրաստուէինք եւ միահամուռ շարժում մը, ընդհանուր տպագրութեան մը յոռաջ բերելով՝ յոռաջ գոչէինք եւ անգամ մըն ալ զիւստանալու նուիրագործէինք հայրենեաց հողը՝ մեր արեան շիթերովը, այն ատեն, Աստուած կամ մեզի պիտի տար կամ մեր թշնամիներուն .

ԱՍՊԱՐ

Գ. ՄԱՏԵՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ

ՄԻՒԹԱՐԵԱՆ ԳՈՐԾ. ԳԱՀԻՐԷԻ

Table with 10 columns of numbers: 147 92 12 200 38 170 140 141 123 145, 11 2 23 161 134 93 30 175 66 15, 65 33 168 183 61 99 13 57 14 188, 158 108 142 138 110 164 27 89 87 156, 177 97 124 64 126 70 20 193 43 48

Գահիրէ 10 Մայիս

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Կաթողիկոսական ընտրութեանց առթիւ աշխարհական պատգամաւորները յետագայ երգմնագիրը պարտին ստորագրել .

Կղերական պատգամաւորները կամ ընտրողները այս երգումէն զերծ են, իրենց սրբազան կոչման համաձայն վարուելու ո՛ր եւ է տարակոյս թողած չ'լինելուն համար, որովհետեւ եթէ կրօնաւորները զեղծեմ իրենց սրբազան կոչման դէմ, ինչ որ յաճախուէր է զժբաղքաբար դո՛նէ Ս. Գրքին համարներէն մէկուն կրթնելով կը զեղծանեն .

Եթէ այսպէս չ'ըլլար՝ անկարելի պիտի ըլլար մէկ հատ օլտուս իր սրբազան կոչման համապատասխանող հոգեւորական գրեմել բոլոր աշխարհի վրայ .

Ե Ր Դ Մ Ն Ա Ք Ի Ր

«Ի ի ներքոյ անուանեալս խոստանամ եւ երգումով յանուն ամենակարողին Աստուծոյ, առաջի սրբոյ Աւետարանի Նորա, առ այն թէ ցանկամ եւ պարտիմ յայսմ առաջիկայ ընտրութեան ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի աննշան Հայոց վասն գլխաւոր կազմակերպութեան սրբոյ Լուսաւորչեան եկեղեցւոյ եւ ծայրագոյն տեսչութեան

Եկեղեցականաց նորին, ըստ մաքուր խղճի մտացս եւ պատուոյս առանց իրիք աշտուութեան եւ սեփական ակնկալութեանց, ի բաց հերքելով յինէն դամբնայն մախանս թշնամութեան եւ կամ զօրպիսի եւ իցէ կապիւ մերձադուրութեան եւ քարեկամութեան՝ ընտրելի միջոյ հոգեւորականաց հայրենի եկեղեցւոյ իմոյ զայնպիսի անձն, զոր եւ ըստ բարեմասնութեանց հանձնարոյն եւ խղճի մտացն առաւել ընդունակագոյն եւ արժանաւորագոյն համարիմ ես եւ յորմէ ակն ունիմ զի նա ի կատարուեմ պարտաւորութեանց իւրոց, զոր զնէ ի վերայ նորա այս վե՛ն պարգեւն հոգեւոր, հանդիսացուցէ գինքն զերմեռանդ պաշտօնեայ Աստուծոյ եւ հոգեւակ անօրէն բարօրութեան եւ օգտի եկեղեցւոյն Քրիստոսի եւ յանձն կղերկ Հայրապետական Իշխանութեան նորա բանաւոր հօտին Քրիստոսի իսկ իթէ այնչափ ընթացայ յայնմամ իբրեւ անհոյ ամի օգտին եկեղեցւոյն եւ ճշմարտորդաց այնքով յորում կայանայ եւ սեպական օգուտն իմ, եւ թաղրեմ զանձն մեղացեալաց կղերակցաց իւմոց, իսկ ի հանդերձելու մի պատասխանատուութեան առաջի Աստուծոյ եւ անկը դատաստանի Նորոգ . ի վախճան երգման վասն անաշտ ընտրութեան համբուրեմ զիմանս եւ զմաջ Փրկչին իմոյ . ամէն . »

ՆՊԱՐԱՎԱՃԱՌ

ՇԱՐԷ ՄՈՒՀԱՄԷՏ ԱԼԻ, ՊԱՊ-ԷԼ-ԽԱԼԻ

Շարէ Մուհամէտ Ալիի ամբողջ զըծին վրայ եղող նպարավաճառներուն մէջ, մեր վաճառատնին միակն է որ ապրանքներու թարմութեամբ եւ մաքրութեան շնորհիւ միայն զիբք մը բռնած է տարիներէ ի վեր .

Նպարեղէններու վերաբերեալ ամէն ինչ՝ փոքր թէ մեծ քանակութեամբ գնողներու համար, անթերի են սոյն վաճառատնից մէջ .

Մեր յաճախորդները գործ թողելու նպատակաւ՝ սպասելի ապրանքներու ընտրութեան եւ գնումին ատեն շատ խնամք եւ նոյն իսկ բժախնդրութիւն կընենք . Ուրեմն նպարեղէնի վերաբերեալ ամէն ապրանք թարմ է եւ մաքուր մեր քով .

Կշիռը, որուն համար ուրիշ շատ տեղեր գանգատանաց պատճառ տուած է, մեր քով գոհունակութիւն միայն տալով է . վկայ քեր քաղաքի յաճախորդները, որոնք միշտ գոհ մտացած են .

Ձեր տունին նպարեղէնի բոլոր պէտքերուն համար գիծեցէ ի Պապ-էլ-Մալէ՝ մեր վաճառատնից եւ չ'պիտի զղջաք .

16-41

ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՐՃԵԱՆ